ԷՆՎԵՐ ՓԱՇԱՅԻ՝ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ Ա. Է.

Հայաստանի Երրորդ հանրապետության հռչակումից հետո հայ պատմաբանների և թուրքագետների համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին անաչառ և, ըստ անհրաժեշտության, քննադատաբար անդրադառնալու հայ ժողովրդի համար այն առանցքային հարցերին, որոնք տասնամյակների ընթացքում կա՛մ խեղաթյուրվել էին, կա՛մ շրջանցվել հայտնի պատճառներով: Նման կնճռոտ խնդիրներից էր Օսմանյան կայսրության ռազմական նախարար, Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից մեկի՝ Իսմայիլ Էնվեր փաշայի և բոլշևիկների միջև 1919-1921 թթ. համագործակցությունը, որին մեծապես նպաստել էր հայտնի բոլշևիկ Կարլ Ռադեկը: Սակայն ի՞նչ ընդհանրություններ կարող էին լինել Կ. Ռադեկի և Էնվերի նման վարկաբեկված անձի միջև:

Ռադեկը Բեռլին էր մեկնել ռուսական և համաշխարհային պատմության մեջ հայտնի հեղափոխական գործիչ, Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական (բոլշևիկյան) կուսակցության հիմնադիր, 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդ Վ. Ի. Լենինի հրամանով: Ընդ որում, բոլշևիկների ներկայացուցիչներն արտասահմանում զբաղված էին հեղափոխական գաղափարախոսություն սերմանելով: Ռադեկը, Բեռլինում մասնակցելով մի շարք կոմունիստական ժողովների, 1919 թ. փետրվարի 15-ին ձերբակալվում է: Հատկանշական է, որ բանտում գտնվող բոլշևիկ գործիչը պարբերաբար հանդիպումներ էր կազմակերպում մի շարք երիտթուրք գործիչների հետ: Դրա մասին են վկայում մասնավորապես թուրք և տաջիկ հեղինակները: Վերջիններիս հետաքրքրությունը Էնվեր փաշայի նկատմամբ պատահական չէր. տխրահռչակ թուրք քաղաքական գործիչը 1919–1922 թթ. ձեռնամուխ էր եղել նոր արկածախնդրության՝ Միջին Ասիայում գլխավորելով բասմաչների ապստամբությունը բոլշևիկների դեմ: Ի դեպ, ինչպես հայտնի է, հենց այդտեղ էլ 1922 թ. օգոստոսի 24-ին Կարմիր բանակի հայազգի հրամանատար Հակոբ Մելքումովը գնդակահարում է Էնվերին:

Ռադեկի և Էնվերի հանդիպումների արդյունքը եղավ այն, որ վերջինս շուտով հրավիրվեց Մոսկվա[1]: Նա 1920 թ. օգոստոսի 15-ին գերմանական անձնագրով (Ալի բեյ կեղծանվամբ) ժամանում է Մոսկվա[2]:

Մոսկվայում Էնվերն ընկալվում է իբրև մի անձ, որ սանձազերծել էր «կայսերապաշտական պատերազմ»: Հատկանշական է նաև այն, որ թեև Խորհրդային Ռուսաստանում Էնվերին համարում էին ոչ այնքան դրական անձ, այնուամենայնիվ, Մոսկվայում լավ հյուրընկալում են: Էնվերի թուրք կենսագիր Շնքեթ Սյուրեյա Այդեմիրը մասնավորապես գրում է, որ փաշան Կրեմլի հանդիպակաց մասում՝ Մոսկվա գետի ափին, ստացել էր մի մեծ առանձնատուն, որտեղ նախկինում հյուրընկալվել էր մեկ այլ երիտթուրք գործիչ՝ Օսմանյան կայսրության ռազմածովային ուժերի նախարար Ջեմալ փաշան[3]: Եվ, ինչպես վկայում է ճապոնացի հետազոտող Մասայուկի Յամայուչին, Էնվերը Կրեմլից ստացել էր մոտ 400 հազար գերմանական մարկի չափ գումար՝ անձնական ծախսերի համար[4]:

Նենգամիտ Էնվերը, գիտակցելով, որ Մոսկվան իրեն վերաբերվում է որպես անբարեհույս անձի, Արևելքի ժողովուրդների առաջին կոնգրեսում (Բաքու, 1920 թ., 1–8 սեպտեմբերի) ելույթի ժամանակ փարիսեցիորեն իրեն մեղադրեց Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցելու համար: Էնվերը Մոսկվա էր ժամանել պաշտոնապես բանակցելու բոլշևիկների հետ՝ Կարմիր բանակին գերմանական զինամթերք մատակարարելու նպատակով: Էնվերը Ռադեկի հետ բանակցությունների մասին է հայտնում Ջեմալ փաշային գրած նամակներից մեկում. «Մեր բոլշևիկ բարեկամը դուրս է եկել բանտից: Այստեղ մեր բոլշևիկ բարեկամները համաձայն են մեզ օգնելու այն գաղափարների շրջանակներում, որոնք մենք քննարկեցինք բանակցությունների ընթացքում: Այս պահին ահա իմ դիրքորոշումը հիմնական գծերով.

1. ազատագրել մահմեդական ազգերին

2. նկատի ունենալով, որ իմպերիալիստական կապիտալիզմը մեր ընդհանուր թշնամին է, համագործակցել սոցիալիստների հետ

3. ընդունել սոցիալիզմի սկզբունքներն այն պայմանով, որ դրանք հարմարեցվեն մահմեդականների այն վարդապետություններին, որոնք կառավարում են մահմեդական երկրների ներքին կյանքն ու գործունեությունը».[5]

Բոլշևիկները Էնվերի միջոցով նպատակ ունեին իրենց ազդեցությունը տարածել Միջին Ասիայում, որտեղ անգլիացիները իրականացնում էին հակախորհրդային քարոզչություն: Իր հերթին, Էնվերն էլ հետապնդում էր սեփական շահերը: Նա բոլշևիկների հակաբրիտանական քարոզչությունը դիտարկեց որպես հարմար առիթ՝ հերթական անգամ միջազգային ասպարեզում գործուն դեր ունենալու համար: Էն-

---

[1] **Абдулаев К.** *От Синьцзяня до Хорасана. Из истории среднеазиатской эмиграции XX века, Душанбе, 2009, с. 202.*

[2] **Yamauchi M.** *The Green Crescent under the Red Star: Enver Pasha in Soviet Russia 1919- 1922, Tokyo, 1991.*

[3] **Şevket Süreyya Aydemir.** *Makedonya'dan'Ortaasya'ya Enver Paşa. 3 Cilt, Istanbul, 1972, s. 520.*

[4] **Yamauchi M.,** *նշվ. աշխ.:*

[5] *Տե՛ս* **Սահակյան Ռ.,** *Բոլշևիկները և Էնվերը, Ե., 1991:*

վերը հույս ուներ, որ բոլշևիկները ռազմական աջակցություն կցուցաբերեն թուրքերին, ու ինքը հաղթական հարված կհասցնի քեմալականներին և փլուզված Օսմանյան կայսրության տարածքներից կվռնդի Անտանտի երկրների ներկայացուցիչներին՝ վերականգնելով երիտթուրքերի իշխանությունը:

Հարկ է նշել, որ բոլշևիկներն ուշիուշով հետևում էին նաև Մուդրոսի զինադադարից հետո Փոքր Ասիայի արևելյան շրջաններում սկիզբ առած քեմալական շարժմանը, որի առաջնորդն էր Մուստաֆա Քեմալը: Բոլշևիկները կարծում էին, որ եթե Էնվերը հաջողության չհասներ Միջին Ասիայում, ապա իրենք խաչ կքաշեին նրա վրա և կկենտրոնանային Մուստաֆա Քեմալի վրա: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ բոլշևիկներն իրավացի էին, երբ երկակի խաղ էին խաղում թե՛ Քեմալի, թե՛ Էնվերի հետ: Այս առումով առանցքային նշանակություն ունեցավ Մուստաֆա Քեմալի հաղթանակը հույների դեմ: Ակնհայտ է, որ հեղափոխության գաղափարի շրջանակները մեծացնելու ձգտումն այնքան ուժեղ էր, որ այդ նպատակին հասնելու ճանապարհին ամեն քայլ արդարացված էր, անգամ համագործակցությունը հանցագործների հետ: Հավելենք նաև, որ Էնվերը, բացի պանթուրքիստական ծրագրերից, մտմտում էր մի շարք պանիսլամիստական գաղափարներ: Մասնավորապես, նա առաջադրել էր «Իսլամի միության համայնք» ստեղծելու գաղափարը, այն է՝ համագործակցություն Մերձավոր Արևելքի և Միջին Ասիայի՝ Սինձյանից մինչև Մաղրիբ տարածված մի շարք հեղափոխական ուժերի հետ[6]:

Էնվերի մտահղացմամբ՝ համայնքը պետք է ունենար սեփական զինված ուժերը: Ուշագրավ է, որ նշյալ ծրագրերն ստացան բոլշևիկների հավանությունը: Եվ նույնիսկ «Իսլամի միության համայնքի» երկրորդ կոնգրեսը տեղի ունեցավ հենց Մոսկվայում[7], որտեղ ելույթ ունեցավ ՌԽՖՍՀ արտգործժողկոմ Գեորգի Չիչերինը՝ խոստանալով օժանդակել Արևելքի հեղափոխական ուժերին: Այն, որ բոլշևիկները թե՛ Մուստաֆա Քեմալի, թե՛ Էնվեր փաշայի հետ երկակի խաղ էին խաղում, երևում է նաև Չիչերինի նամակներից մեկում: Խոսելով Էնվերին ֆինանսական օժանդակություն տրամադրելու հարցի շուրջ՝ նա նշում է. «Սուբսիդիան անհրաժեշտ է նրա համար, որ թուրք ազգայնական կազմակերպությունները (ոչ քեմալական) կարողանան իրենց գոյությունը պահպանել: Սրանք այն տարրերն են, որոնք մնացել են երիտթուրքերից: Վեր-ջիններս մեծ կապեր ունեն կենտրոնական Եվրոպայում, ինչպես նաև համագործակցում են Եգիպտոսում, Ալժիրում և Մարոկկոյում հեղափոխական գործունեություն ծավալող զանազան խմբավորումների հետ: Պահանջվում է նրանց

---

[6] **Тарасов С.** *1921 год: Энвер-паше - Константинополь, Нариманову - Карабах* https://regnum.ru/news/polit/1432857.html

[7] *Նույն տեղում:*

տարեկան տրամադրել 15 հազար լիր, որն այդքան էլ մեծ գումար չէ: Մենք կարծում ենք, որ դա կարելի է իրագործել: Նրանք ունեն այնպիսի կապեր, որոնք բացակայում են քեմալականների միջև: Անձամբ Էնվերը, չնայած որ պատկանում է իմպերիալիստական խմբավորմանը, որպես նրբանկատ քաղաքական գործիչ՝ ավելի լավ է կողմնորոշվում ներկա իրավիճակում: Մենք, իհարկե, ստիպված կլինենք օգտվել նրա քաղաքական ծառայություններից»[8]:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք արձանագրել, որ բոլշևիկները գործում էին «նպատակը արդարացնում է միջոցները» դատապարտելի սկզբունքով, քանի որ նրանց բանակցությունները թե՛ երիտթուրքերի, թե՛ քեմալականների հետ առաջին հերթին մեծ վնաս հասցրին հայ ժողովրդին: Հետագայում դրա մասին են վկայելու Կարսի և Մոսկվայի ոչ իրավական պայմանագրերը, որոնք ստորագրվեցին առանց հայ ժողովրդի կամքը հաշվի առնելու:

К ВОПРОСУ О СОТРУДНИЧЕСТВЕ ЭНВЕРА ПАШИ С БОЛЬШЕВИКАМИ

МЕЛКУМЯН А. Э.

Резюме

В 1919-1922 гг. большевики вступили в контакт с Энвером пашой – бывшим военным министром Османской империи и одним из организаторов геноцида армян.

Руководствуясь собственными интересами, большевики оказали финансовую поддержку Энверу паше.

ON THE QUESTION OF COOPERATION OF ENVER PASHA WITH BOLSHEVIKS

A. MELKUMYAN

Abstract

In 1919-1922 the Bolsheviks entered into contact with Enver Pasha, a former Ottoman military minister and one of the organizers of the Armenian Genocide.

Guided by their own interests, the Bolsheviks provided financial support to Enver Pasha.

[8] **Тарасов С.,** *указ. соч.*